

19

Հոր մօխրով պահի և մօխրով շիջանի.
կեանք ի մահ գնայ և մահուամբ սնանի:

23


Ապակի ի մի կէտ ամփոփէ զարեգակն,
և սիրտ՝ զԱստուած:

25

Ի բարկութեան՝ զդեւ միայն յիշես
առ մեղուցելոյն. զի՞ ոչ յիշես և զհրեշ-
տակն նորա առնթիւնբերակաց:

26

Հաւատք առանց սիրոյ՝ բոյս անծաղիկ:
Հ. Դ. Ա.



Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ ' =====

Կը թըռչըտիս ուր և կամիս,
Ո՛ր ծիծեռնակ, ի՛նչ բաղդ ունիս:
Թէ՛ որ ուզես դու՝ հոլաթեւ
կ'արշաւես օդ. նո՛յնպէս թեթեւ
կ'իջնես ինձ մօտ. խոր ձոր կ'անցնիս,
կարկաչուն ջուրց պէտքը չունիս:
Մենք հեռուէն պըշնումք յամպեր,
Դու հոն կ'երթաս ծարաւդ մարել:

Երբ որ անցնին վարդից ժամեր՝
Դու կը փութաս տուն տեղ փոխել:
Երբ որ բացուին գարնան դռներ,
Ի չիք դառնան ձիւն ու ձըմեռ,
Շէ՛ն գործելով քո ծեր բունկալ՝
Կու գաս նորէն դու հոն ի թառ:
Երկու և ոչ աւելի իրք
Են գոր սիրես՝ Բոյնդ ու Երկիրն:

Եւ իմ հոգիս թէ՛ կը զմայլի,
Թէ՛ նոյն ատեն քեզ կը լմանի.
Թեւ ու թըռչի ունի քեզ պէս,
Աշխարհս իրեն նեղ ասպարէզ.

1. Կշանաւոր Թուրք ուսուցչապետն Մուսլիմ Կոստի
Թարգմանած է այս քերթուածը Ռիկտօսէն, և ես Թուրք
քերթէն, քանզի Ռիկտօսը չունի: — Ս. Ե.

Որով ըստէպ թեւապարէ,
Անջինջ լուսոյ մէջ կը ճախրէ,
Յանկարծ ի ստոր գետին կ'իջնէ,
Քեզի նըման շըրջան կ'ընէ:

Երկու պայման, ո՛ր ծիծեռնակ,
Ունի հոգիս քեզ հանգունակ:

Ս. ԵԱԶԼՃԵԱՆ

Ի Կոպ. 1909



Յ Է Հ Ա Ռ Ա Տ Ս Մ

ՓՐՈՑ. Կ. Մ. ՍՈՂԻՍԵԱՆԻ

Ի՛նչ է կեանքն այս. արդեօք երա՞ղ թէ պատրանք,
կամ պուտ մը ցօղ որ՝ արեւին տակ ցընդի,
թէ՛ բընութեան լոկ ըզբօսանքը խենդուկ,
կամ բըրտուէն շինուած մաման մը թրոնոն,
Որ կը շինէ կամ կը փշրէ երբ ուզէ.
Թէ՛ այսպէս է, ինչու այսքան կըսկիծներ,
ինչու այսքան խորունկ վէրքեր չարաւոտ,
Եւ արցունքներ, ո՛հ, արիւնոտ արցունքներ:
Թէ՛ սեւ պատանքն է այս կեանքի լոկ վախճան,
Եւ օթեւանն անոր չիբի՞մ մը նեխած,
Որդն ու ճըճին, այս զգուելի կենդանիք՝
Թէ՛ են մարդուն վախճանն, հեգնող մեր ընկերք,
Ուրեմն ինչո՞ւ այս զըրկանքները, զոհեր,
Կըսկըծանքի հեկեկումներն, հեծկտութն,
Ու հեիհեւ չարչարանքներ տաժանքոտ:
Թէ՛ այս կեանքն է լոկ երեւոյթ վաղանցիկ,
կամ ո՞վ գիտէ՞ ըզգացումի մէկ խաբկանք,
կամ սոսկ մի շունչ, թեթեւ շոգի մը ցընդող,
Խոտի ծիլ մ'որ հոս կը ծլի, կը թոռմի,
Ուրեմն ինչո՞ւ ցաւին կոտորանքն այսքան սուր,
Դաժան բաղդին անարգանքը խոշտանգող:
Թէ՛ մեր այս կեանքը պատրանք մ'է, գառանցանք,
կամ լոկ մի ոյծ, իւղի կանթեղ մ'ըսպառող,
Ի՛նչ են ուրեմն այս խտելներն, ըղձարներ,
Միշտ վայելու ըզգացումներն այս անկուշտ,
Կիրքէն, մեղքէն յետոյ եկող խըղճմըտանքն,
Այսքան ծանրը ապաշխարանք, խուճկ, աղօթք,
Անշացման դէմ հայհոյանք գարշելի,
Միշտ ըլլալու, միշտ ապրելու խօլ ջանքեր,
Եւ անհատուտ այս տենչանքները կիրքոտ:
Չէ, կը հաւատամ՝ թէ՛ կեանքն այս մեր տառապող,
Որ զըրկանքին, չարչարանքին անվրճատ
կը գիժանայ, կը պապքորի կաշըմբոտն,
Չէ, կը հաւատամ՝ թէ՛ կեանքն այս մեր տուայտող,
Որ կը գտնէ աղօթքին մէջ ըսփոփանք,
Ու բարիքին մէջ վեհ հաճոյք հոգեկան,
Ունի անշուշտ, կը հաւատամ, կը հաւատամ,
Ապագայ կեանք մը՝ յարատեւ Սրբութիւն:

ԱՐԱՍ ՄԱՐԿԵԱՆ